ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, լաբորատոր նյութերի և պարագաների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-9/30-2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3201-2021 գրությամբ «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1004-2021 գրության հիման վրա, 04.03.2021թ.-ին «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 05.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/62 համարի ծածկագիրը:

12.03.2021թ.-ին և 01.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.03.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1004-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ամփոփելով լուծարման արդյունքում առաջացող փույժերի և տուգանքների վերաբերյալ տվյալները, 30.12.2020թ. դրությամբ,

1. միակողմանի մասնակի լուծել է՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ 28.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/30-2 ծածկագրով գնման պայմանագրիը և դրան կից 30.09.2020թ. կնքված N 1 փոփոխությունը,

2. միակողմանի մասնակի լուծել է՝ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի հետ 28.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/29-4 ծածկագրով գնման պայմանագրիը և դրան կից 30.09.2020թ. կնքված N 1 փոփոխությունը,

3. միակողմանի մասնակի լուծել է՝ «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 04.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/30-2 ծածկագրով գնման պայմանագրիը և դրան կից 30.09.2020թ. կնքված N 1 փոփոխությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի, (փոփոխությունների) լուծման վերաբերյալ գրությունը 26.02.2021թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 05.03.2021թ.-ի գրությամբ դիմել է «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3201-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 22.03.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ար Ջի ընդ էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ն 27.07.2020 թ-ին մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարած թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ- 20-9/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 04.09.2020 թ-ին կնքել է թիվ ԳՀԱՊՁԲ-20-9/30-2 պայմանագիրը 1 չափաբաժնի մասով՝ Մարիխուանայի որոշման շտապ թեսթ ընդհանուր 2000 քանակով, որից մատակարարվել է 715 հատը, ինչը եղել է առկա:

Պայմանագիրը կնքելու պահին մեր կազմակերպությունը չէր կարող կանխատեսել, որ ի հայտ են գալու այնպիսի ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք խիստ կսահմանափակեյին հնարավորությունները և որի գործողությունը անհնար կդարձներ պայմանագրի լիարժեք կատարումը:

Պայմանագիրը կնքելուց հետը 2020թ-ի սեպտեմբերի 27 ՀՀ կառավարությունը թիվ N 1586-Ն որոշումով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարում է ռազմական դրություն:

3 հոկտեմբերի 2020 թվականին ՀՀ կառավարությունը թիվ N 1586-Ն որոշումով սահմանվում է ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԴԵՂՈՐԱՅՔԻ, ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԸ ԵՎ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ կարգը:

Այդ ստեղծված պայմաններում արել ենք ամեն ինչ, որ ապահովենք պետությանը ամենաառաջնահերթ դեղորայքով (Մարիխուանայի որոշման շպապ թեսթը ներառված չի այդ ցանկում):

Այստեղ ակնհայտ գործում է ԳՀԱՊՁԲ-20-9/30-2 պայմանագրի 7-րդ կետը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռացմաևան և ատտաԱաոց ռռոտւուն հաւտառառետ. քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը' այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Պայմանագիրը կնքելուց հետո ՀՀ-ում հայտարարվել է ռազմական դրություն, որի ուժի ազդեցությունը շարունակվել է 3 (երեք) ամսից ավելի:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսերի նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Ար Ձի ընդ էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 04.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/30-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը 3-րդ եռամսյակում պետք է մատակարարի 2000 հատ «Մարիխուանայի որոշման շտապ թեսթ» ապրանքատեսակը:

iv. Պատվիրատուի և «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 30.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/30-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխությունը (այսուհետ նաև՝ Փոփոխություն):

v. Փոփոխության հավելված 1-ով սահմանված գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է իրականացվի 2020թ.-ի 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.-ը:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 26.02.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/677 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 04.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/30-2» գնման պայմանագրի դրա հիման վրա 30.09.2020թ. կնքված N 1 Փոփոխության համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել նեքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը նշված քանակով՝

Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց՝ 2020թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.	Չմատակարարված քանակ

Մարիխուանայի որոշման շտապ թեսթ	հատ	2000	2000	1285

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Փոփոխությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3201-2021 գրությամբ «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 04.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/30-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր և 30.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/30-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության համաձայն՝ Մասնակիցը 2000 հատ «Մարիխուանայի որոշման շտապ թեսթ» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացներ 2020թ.-ի 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան

30.10.2020թ.-ը: Հաշվի առնելով վերոնշյալ ապրանքի մասնակի մատակարարման փաստը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Փոփոխությունը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 26.02.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/677 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի մասնակի 30.12.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 26.02.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/677 ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված «Մարիխուանայի որոշման շտապ թեսթ» ապրանքը մասնակի է մատակարարվել վերջինիս կողմից դրսևորած անգործության արդյունքում, իսկ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի մասնակի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված ապրանքների մատակարարման պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 22.03.2021թ.-ին Բողոքներ քննող անձին ուղղված գրությանն, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքը, ապա ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը, օբյեկտիվորեն չէր կարող ազդել Մասնակցի ստանձնած պարտավորությունների չկատարման վրա, քանի որ Փոփոխությունը կնքվել է Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելուց հետո՝ այդ ժամանակահատվածում, որպիսի պայմաններում անհաղթահարելի ուժի ազդեցության հիմքով Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու համար Մասնակիցը չի կարող ազատվել պատասխանատվությունից, ինչպես վերը նշվեց, **անհաղթահարելի ուժի ազդեցությունը պետք է ծագի պայմանագիրը կնքելուց հետո**, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից դիրքորոշմամբ չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց

առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել արտակարգ դրություն, ապա կարանտին և ռազմական դրություն հայտարարելու հանգամանքների՝ Մասնակցի ստանձնած պարտավորությունների չկատարման վրա օբյեկտիվորեն ազդելու փաստի մասին: Վերջինիս կողմից չներկայացվեց կոնկրետ որևէ գործողություն, որը հաղթահարելը, անհաղթահարելի ուժով պայմանավորված, օբյեկտիվորեն եղել է անհնարին՝ կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած վերջինիս պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը պայմանավորված չի եղել օբյեկտիվ հանգամանքներով, որոնց առկայության դեպքում հնարավոր կլիներ սույն գործի քննության ընթացքում արձանագրել Մասնակցի մեղքի բացակայությունը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի իմաստով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով

նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3201-2021 գրությամբ «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/62 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ար Ջի ԸՆԴ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ